



ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

#### ՎԻԼԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Վ պեպրական կառավարման ակադեմիայի  
կառավարման ամբիոնի վարիչ,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ»

#### ԱՐԱՔՍՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ»

### «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Ներկայումս Երևան քաղաքի տնտեսության տարբեր ոլորտներում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց առկայության առաջնային պատճառը քաղաքի մեծաքանակ բնակչությունն է: Այս հիմնախնդիրների լուծումը հնարավոր է՝ ներդնելով «Խելացի քաղաք» հայեցակարգը: Սակայն վերջինիս ներդրումը բարդ գործընթաց է և ենթադրում է լայնածավալ աշխատանքների իրականացում: Այս համատեքստում, սույն հոդվածի շրջանակում, փորձ է արվել վեր հանելու այն գործոնները, որոնք խոչընդոտում են Երևանը խելացի քաղաք դարձնելուն: Այդ նպատակով առաջնահերթորեն ուսումնասիրվել են «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման մեթոդաբանությունը, Երևան քաղաքի իշխանությունների կողմից այդ հայեցակարգի ներդրման ուղղությամբ մինչ օրս ձեռնարկված քայլերը, այնուհետև վերլուծության են ենթարկվել Երևան քաղաքի համապատասխան տարիների եկամտային ցուցանիշները, քաղաքում մատուցվող էլեկտրոնային ծառայությունները, ինչպես նաև աղբատնային, տարեց բնակչության և քաղաքի կառավարմանը բնակչության ուղղակի մասնակցության քանակական ցուցանիշները: Արդյունքում, մեր կողմից առանձնացվել են «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման առումով մի շարք հիմնախնդիրներ և դրանց լուծման որոշ հավանական տարբերակներ:

**Հիմնաբառեր.** «Խելացի քաղաք» հայեցակարգ, Երևան, հայեցակարգի ներդրման հիմնախնդիրներ, եկամտային ցուցանիշներ, էլեկտրոնային ծառայություններ, բնակչության մասնակցություն

JEL: R1, R11, R5, O18, P25

**Ներածություն:** Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ ներկայումս աշխարհի բնակչության 55%-ը բնակվում է քաղաքներում: Կանխատեսումների համաձայն՝ մինչև 2050 թվականը քաղաքային բնակչության թվաքանակը ավելանալու է՝ կազմելով աշխարհի բնակչության շուրջ 68%-ը<sup>1</sup>: Ուրբանիզացման նման տեմպերը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում հանգեցնում են մի շարք հիմնախնդիրների: Ուստի քաղաքային իշխանությունները առկա ռեսուրսներով չեն կարողանում արդյունավետորեն բավարարել աճող բնակչության կարիքներն ու պահանջները: Այս պայմաններում անհրաժեշտություն է առաջանում քաղաքային տնտեսության կառավարման նոր մոտեցումների որոնման: Հենց այս խնդրի լուծմանն է ուղղված «Խելացի քաղաք» հայեցակարգի ձևավորումը: Ներդնելով «Խելացի քաղաք» հայեցակարգը՝ ՏԻՄ-երն ի զորու կլինեն լուծելու քաղաքի առջև ծառայած հիմնախնդիրները: ՀՀ մայրաքաղաք Երևանը նույնպես առանձնանում է բնակչության մեծ թվաքանակով. Երևանի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 1 084.0 հազար մարդ<sup>2</sup>: Ուստի, ինչպես մյուս խոշոր քաղաքները, Երևանը բախվում է այնպիսի հիմնախնդիրների, որոնց պայմաններում քաղաքի իշխանությունները չեն կարողանում ապահովել քաղաքային տնտեսության կառավարման արդյունավետությունը: Այս խնդիրը Երևան քաղաքում կարելի է լուծել՝ ներդնելով «Խելացի քաղաք» հայեցակարգը: Սակայն, հարկ է նշել, որ հայեցակարգի ներդրումը բարդ գործընթաց է: Այն ենթադրում է համապատասխան ռեսուրսների առկայություն, ժամանակ, քաղաքային իշխանությունների կողմից մեծածավալ աշխատանքների իրականացում: Ուստի, սույն հոդվածի նպատակն է վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Երևանում «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրմանը:

**Գրականության ակնարկ:** «Խելացի քաղաք» հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրվել 1990-ական թթ.<sup>3</sup> պայմանավորված «Խելացի աճ» շարժմամբ, որը քաղաքային պլանավորման համար նոր քաղաքականություն էր առաջադրում: Սակայն, այս հասկացությունը լայնորեն սկսել է ընդունվել 2004-2009 թթ., երբ մի շարք տեխնոլոգիական ընկերություններ սկսեցին հանդես գալ քաղաքային հիմնախնդիրների լուծման իրենց տեխնոլոգիական մոտեցումներով: Այդուհանդերձ, մինչ օրս «Խելացի քաղաք» հայեցակարգի համընդհանուր ընդունված սահմանում գոյություն չունի: Ընդհանրացնելով գրականության մեջ առկա սահմանումները՝ *Մեյջերը* և *Բոլիվարը* դրանք բաժանում են երեք խմբի՝

- «Խելացի քաղաքները»՝ որպես խելացի տեխնոլոգիաները օգտագործող քաղաքներ (տեխնոլոգիական կողմնորոշում),

<sup>1</sup> St'u World Urbanization Prospects 2018 Highlights, United Nations, New York, 2019, <https://population.un.org/wup/Publications/Files/WUP2018-Highlights.pdf>:

<sup>2</sup> ՏԻՄ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. ապրիլի 1-ի դրությամբ:

- «Խելացի քաղաքները»՝ որպես խելացի մարդկանցից կազմված քաղաքներ (դեպի մարդկային ռեսուրսները կողմնորոշում),
- «Խելացի քաղաքները»՝ որպես խելացի համագործակցությամբ քաղաքներ (կառավարման վրա շեշտադրում)<sup>3</sup>:

Սահմանումների նման դասակարգումը պայմանավորված է «Խելացի քաղաք» հայեցակարգի զարգացմամբ: Այսպես՝ Բ. Կոենն առանձնացրել է վերոգրյալ հայեցակարգի զարգացման երեք փուլ<sup>4</sup>: Ըստ նրա՝ «Խելացի քաղաք» հայեցակարգի զարգացման առաջին փուլում տեխնոլոգիական ընկերությունների կողմից առաջարկվում են որոշ հնարավոր տեխնոլոգիական լուծումներ, որոնք անառարկելիորեն ընդունվում են քաղաքային իշխանությունների կողմից, առանց հստակ պատկերացում ունենալու, թե տվյալ տեխնոլոգիան ինչպես կարող է նպաստել բնակչության կյանքի որակի բարելավմանը: Այսինքն, գերակշռում է հստակ տեխնոլոգիական կողմնորոշում, որի մասին են փաստում *Վաշթրնի*, *Հարիսոնի*, *Աուրիգիի* և այլ հետազոտողների աշխատությունները, ովքեր խելացի քաղաքը բնորոշել են բացառապես տեխնոլոգիական շեշտադրմամբ: Կարող ենք ասել, որ այս փուլը ղեկավարվում է տեխնոլոգիական ընկերությունների կողմից, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններն ու բնակչությունը գրեթե դերակատարում չունեն: Առկա է բնակչության թվային գրագիտության և մասնակցության պակաս ու հստակ շեշտադրում տեխնոլոգիական հնարավորությունների վրա, այսինքն՝ այս փուլում «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրումը սահմանափակվում է զուտ տեխնոլոգիայի ներդրմամբ: Սակայն, ինչպես նշում են Մակքինզի գլոբալ ինստիտուտի հետազոտողները, ժամանակի ընթացքում ակնհայտ է դառնում, որ քաղաքը չի կարող համարվել խելացի, եթե պարզապես թվային տեխնոլոգիա է ներդրվում, այլ քաղաքը այդպիսին կդառնա, երբ այդ տեխնոլոգիան և տվյալներն օգտագործվեն արդյունավետորեն՝ ընդունելով առավել հիմնավոր որոշումներ և ապահովելով բարելավված կյանքի որակ<sup>5</sup>: Ըստ այդմ, տեղի է ունենում «Խելացի քաղաք» հայեցակարգի զարգացում, և սկիզբ է դրվում հայեցակարգի զարգացման երկրորդ փուլին, որը բնորոշվում է որպես ՏԻՄ-երի կողմից առաջնորդվող: Նման բնորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ քաղաքային իշխանություններն են նախաձեռնություն դրսևորում՝ վեր հանելու քաղաքի հիմնախնդիրները և դրանք ներկայացնելու համապատասխան տեխնոլոգիական ընկերություններին: Այսինքն, երկրորդ փուլում ՏԻՄ-երը նպատակ են հետապնդում, ՏՀՏ-ն որպես

<sup>3</sup> *St' u Smart Cities and Smart Spaces: Concepts, Methodologies, Tools, and Applications*, Information Resources Management Association, IGI Global, 2019, էջ 199, [https://books.google.am/books?id=9v5oDwAAQBAJ&pg=PA271&lpg=PA271&dq=boyd+cohen+smart+city+wheel&source=bl&ots=3k8Tq4mqxq&sig=ACfU3U0cvArFAEI38ZS86ggBmKa3-VIAg&hl=hy&sa=X&ved=2ahUKEwj8wNq4\\_aTpAhWITsAKHeHcAWo4MhDoATAAegQlChAB#v=onepage&q=boyd%20cohen%20smart%20city%20wheel&f=false](https://books.google.am/books?id=9v5oDwAAQBAJ&pg=PA271&lpg=PA271&dq=boyd+cohen+smart+city+wheel&source=bl&ots=3k8Tq4mqxq&sig=ACfU3U0cvArFAEI38ZS86ggBmKa3-VIAg&hl=hy&sa=X&ved=2ahUKEwj8wNq4_aTpAhWITsAKHeHcAWo4MhDoATAAegQlChAB#v=onepage&q=boyd%20cohen%20smart%20city%20wheel&f=false) [Retrieved on 01.08.2020]:

<sup>4</sup> <https://www.fastcompany.com/3047795/the-3-generations-of-smart-cities> [Retrieved on 01.08.2020]

<sup>5</sup> *St' u Mckinsey Global Institute, Smart Cities: Digital Solutions for a more Livable Future*, McKinsey & Company, 2018, էջ 5, <https://www.mckinsey.com/~media/mckinsey/industries/capital%20projects%20and%20infrastructure/our%20insights/smart%20cities%20digital%20solutions%20for%20a%20more%20livable%20future/mgi-smart-cities-full-report.ashx?fbclid=IwAR0UPAkFFW0tY5KlRxtupknd2ab0Xh1UjMBMLmgRLHQw9Tzn9FJZ59FsMkE> [Retrieved on 01.08.2020]:

քաղաքային հիմնախնդիրները լուծելու միջոց օգտագործելով, բարելավելու մարդկանց կյանքի որակը՝ ապահովելով կայուն զարգացում, ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Այս փուլի հիմնական բնութագրիչներն են՝ տեխնոլոգիայի օգտագործումը որպես միջոց, կողմնորոշում դեպի բնակչության կյանքի որակի բարելավումը: Այսպիսով, վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ հայեցակարգի զարգացման երկրորդ փուլում հայեցակարգի ներդրումը չի սահմանափակվում պարզապես տեխնոլոգիա ներդնելով, այլ ՏԻՄ-երի կողմից մշակվում է համապատասխան ռազմավարություն, որով հստակորեն սահմանազատվում են քաղաքի համար առաջնային նշանակություն ունեցող ոլորտային հիմնախնդիրները, որոնց լուծմամբ կբարելավվի բնակիչների կյանքի որակը: Այդուհանդերձ, ինչպես նշում է Ա. Մեյջերը, թեպետ ՏԻՄ-երի կողմից վարվող քաղաքականությունն ունի էական նշանակություն, սակայն խելացի քաղաք կառուցելը միայն քաղաքային իշխանությունների կողմից համապատասխան ռազմավարություն մշակելն ու իրագործելը չէ, այլ, որ առավել քան կարևոր է, այդ գործընթացում քաղաքի բոլոր շահառուներին ներգրավելը<sup>6</sup>: Այս մասին են փաստում «էդեն» ռազմավարության ինստիտուտի հետազոտողների ուսումնասիրությունները, որոնք հայեցակարգի ներդրման գործընթացում հաջողություն գրանցած քաղաքների դիտարկումներ են իրականացրել: Արդյունքում պարզ է դարձել, որ այդ քաղաքների իշխանությունները միանշանակորեն ընդունում են, որ, ներգրավելով արտաքին շահառուներին, ինչպիսիք են գործարար հատվածը, ստարտափները, գիտական հանրությունը և, ընդհանուր առմամբ, հասարակությունը, կարող են ստանալ կարծիքների, գաղափարների և առաջարկությունների այնպիսի ծավալ և բազմազանություն, որը թույլ կտա ծախսարդյունավետ կերպով կառուցել խելացի քաղաք<sup>7</sup>: Այդուհանդերձ, շատ տեսաբաններ պնդում են, որ հատկապես կարևոր է բնակիչների՝ որպես քաղաքի հիմնական շահառուների դերակատարումը «խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման գործընթացում: Կարծում ենք, որ բնակչության դերն իսկապես կարևոր է, քանի որ տեղական ինքնակառավարման բուն էությունն արդեն իսկ ենթադրում է բնակչության կողմից տեղական նշանակության հարցերի լուծմանը մասնակցություն: Այսպիսով, անցում է կատարվում «խելացի քաղաք» հայեցակարգի զարգացման երրորդ փուլին, որը բնորոշվում է որպես բնակչության կողմից ղեկավարվող: Հետազոտողներից շատերը կարծում են, որ քաղաքը կարող է իսկապես համարվել խելացի, եթե այն անցում է կատարել զարգացման երրորդ փուլ:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հոդվածի համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են ծառայել «խելացի քաղաք» հայեցակարգին վերաբերող արտասահմանյան գրականությունը, միջազգային հետազոտական կազմակերպությունների աշխատությունները, ՀՀ վիճա-

<sup>6</sup> St'u Logvinov V., Lebid N., Is the Smart Cities of Hybrid Model of Local Government - The type III cities: Four possible answers: Smart Cities and Regional Development Journal (03-2018), էջ 18:

<sup>7</sup> St'u Top 50 Smart City Governments, Eden Strategy Institute and ONG&ONG Pte Ltd. 2018, էջ 22, [https://static1.squarespace.com/static/5b3c517fec4eb767a04e73ff/t/5b513c57aa4a99f62d168e60/132050650562/Eden-OXD\\_Top+50+Smart+City+Governments.pdf?fbclid=IwAR0Z0F8sQMbM0egco\\_BFDPCjfrV\\_UDnJinYbcFpH5KcZBNzDwBagU42e0E](https://static1.squarespace.com/static/5b3c517fec4eb767a04e73ff/t/5b513c57aa4a99f62d168e60/132050650562/Eden-OXD_Top+50+Smart+City+Governments.pdf?fbclid=IwAR0Z0F8sQMbM0egco_BFDPCjfrV_UDnJinYbcFpH5KcZBNzDwBagU42e0E) [Retrieved on 01.08.2020]:

կազմակերպչական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի հրապարակած տվյալները, ինչպես նաև համացանցային հրապարակումները: Հոդվածում կիրառվել են վերլուծության, համադրության, վերացարկման, համեմատական, գրաֆիկական և վիճակագրական վերլուծության մեթոդները: Վերլուծության և համադրության մեթոդների շնորհիվ ուսումնասիրվել են Երևան քաղաքի բյուջեի եկամտային ցուցանիշները, աղքատության, տարեց բնակչության, քաղաքի կառավարմանը մասնակցության մի շարք ցուցանիշներ: Վերացարկման մեթոդը հնարավորություն է տվել առանձնացնելու Երևանի բնակչության այն շերտերը, որոնք առավել խոցելի են «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման արդյունքում ի հայտ եկող փոփոխությունների նկատմամբ: Վիճակագրական տվյալների համեմատական և գրաֆիկական վերլուծության շնորհիվ ակնհայտ են դարձել Երևան քաղաքի ընդհանուր եկամուտներում սեփական եկամուտների ցածր տեսակարար կշռի կայուն տեմպերը մի քանի տարիների կտրվածքով: Իսկ, ահա, համապատասխան իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտներում սեփական եկամուտների ցածր տեսակարար կշռի էական պատճառներից է օրենսդրական բացթողումների և օրենսդրորեն ընձեռնված, սակայն դեռևս չօգտագործված հնարավորությունների առկայությունը: Երևանի աղքատ բնակչության վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու, որ երեք տարիների կտրվածքով աղքատ բնակչության տեսակարար կշիռը Երևան քաղաքի բնակչության ընդհանուր թվաքանակում շարունակում է կայուն դինամիկա պահպանել: Իսկ բնակչության մասնակցության տեմպերի մասին տեղեկություն ստանալու համար իրականացվել է համացանցային հրապարակումների վերլուծություն, որի արդյունքում ակնհայտ է դարձել, որ էլեկտրոնային մասնակցության հարթակներում առկա է քաղաքի կառավարմանը բնակչության մասնակցության ցածր մակարդակ: Պարզելու համար, թե որոնք են մասնակցության ցածր տեմպերի պատճառները, Երևանի բնակչության շրջանում անցկացվել են համապատասխան հարցումներ:

**Վերլուծություն:** «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման ուղղությամբ արդեն մի քանի տարի է, ինչ Երևան քաղաքի իշխանությունների կողմից կատարվում են որոշ քայլեր: Այսպես՝ դեռևս 2017 թ. Երևանի քաղաքապետի կարգադրությամբ ստեղծվեց «Երևան-Խելացի քաղաք» ծրագրի մշակման և իրականացման հանձնաժողով, որում ընդգրկվեցին տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի մի շարք առաջատար մասնագետներ: Հանձնաժողովի նպատակն է եղել ի սկզբանե տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ բարելավել Երևան քաղաքի բնակիչների կյանքի պայմանները, կատարելագործել բնակիչներին և զբոսաշրջիկներին մատուցվող ծառայությունների որակը: «Երևան-Խելացի քաղաք» ծրագիրը լիարժեք և առավել արագ ու արդյունավետ կյանքի կոչելու համար արդեն 2018 թ. Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ ստեղծվել է շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ «Երևան-Խելացի քաղաք» տեխնոլոգիական հիմնադրամը: Այնուհետև, Երևանի քաղաքային իշխանությունների կողմից, պարբերաբար կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, քննարկումներ միջազգային տեխնոլոգիական ընկերություն-

ների ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների հետ, քաղաքային իշխանության ներկայացուցիչները մասնակցել են մի շարք գիտաժողովների: Ընդ որում, Երևան քաղաքի «Կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի հետ համագործակցությամբ, որն, ի դեպ, Երևանի քաղաքապետարանի ՏՏ ոլորտի հիմնական խորհրդատուն է, մշակվել և ներդրվել են մի շարք էլեկտրոնային ծառայություններ: Ի վերջո, 2019 թ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակի աջակցությամբ մշակվել է քաղաքային տնտեսության ոլորտների թվային վերափոխման «Խելացի քաղաք» ռազմավարական ծրագիրը, ինչն ուղենիշ է հանդիսանալու ներդրվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար<sup>8</sup>:

Ըստ այդմ՝ հաջորդիվ փորձենք պարզել, թե ներկայումս վերագրյալ ծրագրի ներդրումը որ փուլում է գտնվում: Այսպես՝ Երևանի զարգացման 2020 թ. ծրագրում նշվում է, որ «Խելացի քաղաք» ծրագրով նախատեսվում է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտներում ներդնել գործառույթների ավտոմատացման, տեղեկատվական, վերահսկման, կառավարման համակարգեր, տրամադրել էլեկտրոնային ծառայություններ, ներդնել քաղաքի անվտանգությանն ու դիմակայունության բարելավմանն ուղղված համակարգեր, նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բարելավել քաղաքի էկոլոգիական վիճակը, զարգացնել ենթակառուցվածքները, ստեղծել քաղաքի միասնական կառավարման և ծառայությունների վերահսկման կենտրոն, ապահովել առկա համակարգերից և բանացանցից անհրաժեշտ տվյալների մեկտեղումն ու դրանց տարածաժամանակային վերլուծությունը՝ որոշումների ընդունման գործընթացների աջակցության նպատակով: Այս փուլով, նախևառաջ, նախատեսվում է ստեղծել կառավարման կենտրոն, ինտեգրվել առկա համակարգերին և առկա բանացանցին<sup>9</sup>:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ դեռևս ծրագրով նախատեսված աշխատանքները չեն իրագործվել, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Զարգացման ծրագրում նաև մատնանշվում են հայեցակարգի ներդրմամբ ի հայտ եկող հիմնախնդիրներ, մասնավորապես՝

- թվայնացման արդյունքում առաջացող կիրեռանվտանգության ապահովում,
- տեխնոլոգիական համակարգերի մատակարար ընկերություններից առաջացող կախվածություն,
- ոլորտի մասնագետների սղություն և դրանց պահանջարկի անընդհատ մեծացող տեմպեր,
- անձնական տվյալների պաշտպանություն,
- քաղաքային տնտեսության ոլորտների աշխատակիցների տեխնոլոգիական գիտելիքների պակասի հետևանքով անհրաժեշտ ՏՏ համակարգի տեխնիկական պահանջների մշակման անկարողություն<sup>10</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ Երևան քաղաքում «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման հիմնախնդիրների շրջանակը չի սահմանափակվում

<sup>8</sup> Տե՛ս Երևանի զարգացման 2020 թ. ծրագիր, <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/93/32dca49b36c57e3b64f200a485f4de55046b901c.pdf>, էջ 99:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 100:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 99:

այսքանով: Հաջորդիվ փորձենք վեր հանել քաղաքում հայեցակարգի լիարժեք ներդրմանը խոչընդոտող որոշ գործոններ:

Այսպես, թեպետ Երևանում «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրումը կարող է քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ապահովել զգալի արդյունք, սակայն այն պահանջում է նաև մեծածավալ ֆինանսական ներդրումներ: Մշակված ծրագիրը նախատեսում է, որ հայեցակարգի ներդրումը պետք է իրականացվի արտաքին ֆինանսական միջոցների աջակցությամբ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խելացի քաղաք» հայեցակարգը ենթադրում է բազում հնարավորություններ, որոնք չեն կարող մշտապես իրագործվել արտաքին աջակցությամբ և, միևնույն ժամանակ, տեղական ինքնակառավարման տրամաբանությունը ենթադրում է բնակչության պահանջմունքների բավարարում, քաղաքային հիմնախնդիրների լուծում սեփական միջոցներով, հարկ ենք համարում ներկայացնել Երևան քաղաքի մի քանի տարիների բյուջեների եկամտային ցուցանիշների վերլուծությունը՝ պարզելու համար քաղաքի ֆինանսական ներուժը:

**Աղյուսակ 1**

**Երևան քաղաքի բյուջեի եկամտային ցուցանիշները 2017\*-2019\*\* թթ.**  
(մլրդ ՀՀ դրամ)<sup>12</sup>

	2017 թ.*	2018 թ.*	2019 թ.*
Ընդամենը եկամուտներ, որից՝	72,5	68,7	75,0
հարկեր և տուրքեր	15,0	14,3	17,0
պաշտոնական դրամաշնորհներ	21,8	22,3	22,1
այլ եկամուտներ	35,7	32,0	35,9

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ի տվյալներից, 2017 թ. համախառն եկամուտները կազմել են 72,5 մլրդ ՀՀ դրամ, որից՝ 21,8 մլրդ ՀՀ դրամը կազմել են պաշտոնական դրամաշնորհները, իսկ պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից ստացվող միջոցները, որոնք ներառվում են համախառն եկամուտների «Այլ եկամուտներ» խմբում, կազմել են 30,4 մլրդ ՀՀ դրամ: Այսպիսով, արտաքին աղբյուրներից ստացվող եկամուտները կազմել են 52,1 մլրդ ՀՀ դրամ, իսկ սեփական եկամուտները՝ 20,3 մլրդ ՀՀ դրամ:

2018 թ. բյուջեի տարեկան հաստատված պլանով համախառն եկամուտները կազմել են 68,7 մլրդ ՀՀ դրամ, որից սեփական եկամուտները կազմել են ընդամենը 21,4 մլրդ ՀՀ դրամ: Արտաքին աղբյուրներից ստացվող միջոցները կազմել են 47,3 մլրդ ՀՀ դրամ, որից պաշտոնական դրամաշնորհները՝ 22,3 մլրդ ՀՀ դրամ, պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից տրվող միջոցները՝ 24,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհները՝ 10,000.0 մլն ՀՀ դրամ:

Իսկ 2019 թ. Երևանի բյուջեի համախառն եկամուտները կազմել են 75,1 մլրդ ՀՀ դրամ, որից սեփական եկամուտները՝ 25,0 մլրդ ՀՀ դրամ, պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար


<sup>12</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ Երևան քաղաքի 2017-2019 թթ. բյուջեի եկամտային ցուցանիշների հիման վրա:

\* Ներկայացված են 2016-2018 թթ. փաստացի կատարված բյուջեների տվյալները:

\*\* Ներկայացված են հանրային քննարկման դրված՝ Երևան քաղաքի 2019 թ. բյուջեի կատարման հաշվետվության տվյալները:

պետական բյուջեից տրվող միջոցները՝ 27,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 22,1 մլրդ ՀՀ դրամ:

Ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ ընդհանուր եկամուտների մեջ սեփական աղբյուրներից ստացվող եկամուտները ցածր տեսակարար կշիռ ունեն: Վերոգրյալն առավել ակնառու դարձնելու նպատակով այն ներկայացնենք գծապատկերի տեսքով (գծապատկեր 1):



**Գծապատկեր 1. Երևան քաղաքի բյուջեի ընդհանուր եկամուտներում սեփական եկամուտների տեսակարար կշիռը 2017-2019 թթ. (մլրդ ՀՀ դրամ)<sup>13</sup>**

Ինչպես տեսնում ենք, Երևան քաղաքի սեփական եկամուտների մասնաբաժինն ընդհանուր եկամուտներում ցածր տեսակարար կշիռ ունի: Թեպետ, 2017 թ. համեմատ, 2018-ին այդ ցուցանիշն աճել է 3%-ով, իսկ 2019 թ., 2018-ի համեմատ, այն ավելի է եղել 2%-ով, այնուամենայնիվ, վերոգրյալ ցուցանիշը երեք տարիների կտրվածքով շարունակում է ցածր մնալ: Այսինքն, ակնհայտ է դառնում, որ համայնքի բնակչությանը ծառայություններ մատուցելու համար քաղաքն ապավինում է արտաքին միջոցների ներգրավմանը: Մինչդեռ, ելնելով տեղական ինքնակառավարման տրամաբանությունից, համայնքը սեփական միջոցներով պետք է ի զորու լինի բավարարելու բնակչության կարիքները: Կարծում ենք, որ այս խնդրի պատճառը ոչ թե սեփական եկամուտների հավաքագրման ոչ պատշաճ կազմակերպումն է, այլ առաջնահերթ՝ սեփական եկամուտների քիչ թվով աղբյուրների և այլ խնդիրների առկայությունը: Այսպես, Երևան քաղաքում գործող տեղական հարկերն են հողի հարկը և գույքահարկը, իսկ ընդամենը երկու հարկատեսակի վերապահումը համայնքային մակարդակին, կարծում ենք, որ շատ քիչ է՝ ապահովելու համայնքի սեփական եկամուտների ողջամիտ չափը, հետևաբար՝ դրանով իսկ հասնելու համայնքների ֆինանսական անկախության մակարդակի: Բացի դրանից, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է Երևանի տարածքում գանձվող եկամտային հարկից, շահութահարկից և բնապահպանական վճարներից մասհանումներ համայնքային բյուջե: Ընդ որում, մասհանումների տոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով, որը մինչ օրս չի կատարվել, հետևաբար՝ Երևան քաղաքի բյուջե նշված հարկատեսակնե-

<sup>13</sup> Գծապատկերը կազմել են հեղինակները՝ Երևան քաղաքի 2017-2019 թթ. բյուջետային ցուցանիշների հիման վրա:



րից մասհանումներ երբևէ չեն կատարվել: Այս ամենի հետևանքով, Երևան քաղաքը զուրկ է մնում զգալի ծավալով սեփական եկամուտների ստացման հնարավորությունից: Մինչդեռ, նշված հարկատեսակներից մասհանումներն էական ազդեցություն կարող են ունենալ քաղաքի տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վրա՝ ավելացնելով սեփական եկամուտների ծավալը, ինչպես նաև Երևանի իշխանություններին շահադրդելով նպաստավոր պայմաններ ստեղծել քաղաքում մասնավոր հատվածի զարգացման համար: Այս համատեքստում, հարկ ենք համարում մատնանշել ևս մեկ գործոն, որի պատճառով Երևան քաղաքի բյուջեն չի համալրվում բավարար սեփական եկամուտներով: Այսպես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված է Երևանի բյուջեի ձևավորումը մուտքերի այնպիսի աղբյուրներից, ինչպիսիք են քաղաքապետարանի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները: Քաղաքապետարանի կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը,<sup>14</sup> սակայն այդ գործընթացը կարգավորող կառավարության որոշում առայժմ չի ընդունվել, հետևաբար՝ Երևանի քաղաքապետարանի կողմից երբևէ պարտատոմսեր չեն թողարկվել:

Ինչպես արդեն նշվեց, Երևան քաղաքում արդեն իսկ մատուցվում են որոշ էլեկտրոնային ծառայություններ: Մասնավորապես, գործում է «Մեկ պատուհան» համակարգը, «Մանկապարտեզ» էլեկտրոնային կառավարման համակարգը, հնարավոր է իրականացնել գույքահարկի և հողի հարկի վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային հարցում, նաև գործարկվում է շինարարական թույլտվությունների առցանց համակարգ: Լայն հնարավորություններ է ընձեռում հատկապես «Մեկ պատուհան» համակարգը. այն բաղկացած է երկու բաժիններից՝ «Արագ դիմում», որը նախատեսված է առանց ոլորտային ուղղվածության դիմումներ գրելու, կենցաղային խնդիրներ և առաջարկներ հայտնելու համար, և «Մեկ պատուհան» բաժինը, որն ունի որոշակի ոլորտային ուղղվածություն: Այն պարունակում է հետևյալ ուղղությունները՝

- կառուցապատման թույլտվությունների և քաղաքաշինական փաստաթղթերի դիմումներ,
- անշարժ գույք՝ հողի և ունեցվածքի գործառնություններ, չափագրում,
- անշարժ գույք՝ վաճառք, վարձակալություն, օրինականացում, հիմքերի վերականգնում,
- ֆինանսական,
- երեխաների որդեգրում, կրթության հատուկ պայմաններ,
- կազմակերպական,
- առողջապահություն,
- այլ<sup>15</sup>:

Առավել մանրամասնորեն ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների բնութագրերը՝ ակնհայտ է դառնում, որ այն իսկապես կարող է զգալիորեն նպաստել քաղաքի

<sup>14</sup> Տե՛ս «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդված 28, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 73:

<sup>15</sup> <https://www.yerevan.am/am/one-window/>

բնակչության խնդիրների արդյունավետ լուծմանը: Այդուհանդերձ, հարկ է պարզել՝ արդյո՞ք քաղաքի բնակիչները օգտվում են կամ կարողանում են օգտվել այդ ծառայություններից, քանի որ վերջիններս անմիջականորեն ուղղված են բնակչության կարիքների բավարարմանը: Երևանի քաղաքային իշխանությունների պնդմամբ՝ էլեկտրոնային ծառայություններից օգտվողների թիվն օրեցօր աճում է, սակայն եթե նախատեսվում է գործարկել «Իսելացի քաղաք» հայեցակարգն իր բոլոր հնարավոր լուծումներով, ապա առաջնային ուշադրություն է անհրաժեշտ հատկացնել այն հանգամանքին, թե արդյոք քաղաքի բոլոր բնակիչները ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով, համացանցային կապով, արդյոք ունեն բավարար թվային գրագիտություն: Հակառակ պարագայում, տեխնոլոգիաների ներդրումը չի ունենա արդյունք, այն չի ծառայի իր հիմնական նպատակին: Ըստ այդմ՝ փորձենք պարզել, թե Երևան քաղաքի բնակչությունը ներկայումս պատրաստ է արդյոք օգտվել այն հնարավորություններից, որոնք կարող է ընձեռել «Իսելացի քաղաք» հայեցակարգը: Կարծում ենք, որ, այլ հավասար պայմաններում, բնակչության որոշակի խմբերը, մասնավորապես տարեց՝ 60 և ավելի տարիք ունեցող, ինչպես նաև աղքատ բնակչությունը, չեն կարողանա օգտվել հայեցակարգի շրջանակներում ներդրվող ծառայություններից: Այսինքն, բնակչության վերոգրյալ խմբերն այդ առումով առավել խոցելի են. աղքատ բնակչությունը բնականաբար ի զորու չէ ձեռք բերել ո՛չ սմարթֆոններ, ո՛չ էլ ապահովված է համացանցային կապով, իսկ 60 և ավելի տարիք ունեցող անձինք, այլ հավասար պայմաններում, չունեն բավարար թվային գրագիտություն: Ըստ այդմ՝ հաջորդիվ փորձենք պարզել թե բնակչության այդ երկու խմբերը Երևանի բնակչության ընդհանուր թվաքանակում ինչպիսի տեսակարար կշիռ ունեն:

**Աղյուսակ 2**

**Երևան քաղաքի աղքատ բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 2015-2017 թթ.<sup>16</sup>**

	2015	2016	2017
Աղքատ բնակչության տեսակարար կշիռ (%)	25.0	24.9	22.4

**Աղյուսակ 3**

**60 և ավելի տարիք ունեցող բնակչության տեսակարար կշիռը Երևանի բնակչության ընդհանուր թվաքանակում 2016-2018 թթ.<sup>17</sup>**

	2016	2017	2018
60 և ավելի տարիք ունեցող բնակչության տեսակարար կշիռ (%)	19.7	19.7	20.3

Աղյուսակ 2-ից ակնհայտ է դառնում, որ թեպետ երեք տարիների ընթացքում աղքատության տեսակարար կշիռը փոքր-ինչ նվազել է, սակայն շարունակում է կայուն դինամիկա պահպանել, և 2017 թ. տվյալներով՝ բնակ-

<sup>16</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019» հրապարակման հիման վրա, [https://www.armstat.am/file/article/marzer\\_2019\\_21\\_.pdf](https://www.armstat.am/file/article/marzer_2019_21_.pdf):

<sup>17</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (2017-2019) հրապարակումների հիման վրա:

չության որոշակի հատվածը՝ 22.4%-ը, դեռևս շարունակում է աղքատ մնալ: Իսկ Երևանի ընդհանուր բնակչության թվաքանակում 60 և ավելի տարիք ունեցող անձանց տեսակարար կշիռը 2018 թ., նախորդ երկու տարիների նկատմամբ, փոքր-ինչ աճ է գրանցել՝ կազմելով 20.3% (աղյուսակ 3): Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ բնակչության վերոգրյալ շերտերի շրջանակներում կարող է «հատում» առաջանալ, քանի որ տարեց բնակչության շրջանում առկա է աղքատության բավականին բարձր մակարդակ:

Հարկ է նշել նաև, որ «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման գործընթացում չափազանց կարևոր է ընդգրկել քաղաքի բնակչությանը: Այդ մասին է փաստում ինչպես միջազգային փորձը, այնպես էլ տեղական ինքնակառավարման գաղափարախոսությունը: Թեպետ Երևան քաղաքի համար մշակված ծրագրում բնակչությունը որևէ մասնակցություն չի ունեցել, այդուհանդերձ, «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրումը չի սահմանափակվում միայն ծրագրի մշակմամբ: Այսինքն, թեև այս փուլում քաղաքացիները դեռևս մասնակցություն չեն ունեցել, ինչն ունի իր պատճառները, այնուամենայնիվ, խելացի լուծումները կրում են շարունակական բնույթ, և հետագայում հնարավոր է այդ գործընթացում արդյունավետորեն ներգրավել բնակիչներին: Ուստի, փորձենք պարզել, թե ներկայումս Երևան քաղաքի բնակչությունը ինչպիսի մասնակցություն է ունենում քաղաքային խնդիրների լուծմանը:

Ինչպես գիտենք, տեղական նշանակության հարցերի լուծմանը բնակչության մասնակցությունը տեղի է ունենում տեղական ինքնակառավարման ընտրովի և այլ մարմինների միջոցով, ինչպես նաև անմիջականորեն՝ ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների օգտագործման միջոցով: Սույն հոդվածի շրջանակում հարկ ենք համարում ցույց տալ, թե Երևանում բնակչության ուղղակի մասնակցության ինչպիսի պատկեր է տիրում: Այսպես՝ ՏՀՏ-ների զարգացման ներկայիս տեմպերը հնարավորություն են տալիս ՏԻՄ-երին՝ բնակչությանը տեղական գործերի կառավարմանը ներգրավել առավել ճկուն եղանակով: Մասնավորապես, ստեղծելով պաշտոնական կայքէջեր, սոցիալական ցանցերում համապատասխան էջեր, բնակչությունը հնարավորություն է ստանում առանց ավելորդ ջանքեր գործադրելու իր ներդրումն ունենալ քաղաքի կառավարմանը: Ըստ այդմ՝ ներկայացնենք էլեկտրոնային մասնակցության հարթակներում Երևանի բնակչության մասնակցության պատկերը: Այսպես՝ Երևանի քաղաքապետարանը ֆեյսբուք սոցիալական ցանցում վարում է համապատասխան էջ, որտեղ քաղաքի կառավարմանն առնչվող գրեթե ցանկացած տեղակատվություն լուսաբանվում է: Այս հարթակում Երևանի բնակիչները, բացի տեղեկություն ստանալուց, կարող են նաև վեր հանել հիմնախնդիրներ, բարձրաձայնել իրենց կարծիքը, առաջարկել լուծումներ: Ըստ այդմ, ուսումնասիրության ենթարկելով հարթակում առկա տեղեկատվությունը, կարող ենք փաստել հետևյալը. Երևանի քաղաքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջին 2020 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հետևում է շուրջ 55,400 հազար մարդ, ինչը կազմում է Երևանի բնակչության ընդամենը 5%-ը: Բացի դրանից, վերլուծելով 2020 թ. հունվարի 1-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված նյութերի հավանությունների և մեկնաբանությունների քանակը՝ կրկին կարող ենք արձա-

նագրել մասնակցության շատ ցածր տեմպեր. էջում հրապարակվող ցանկացած տեղեկության հավանությունների քանակը միջինում տատանվում է 1000-ի շրջանակում, իսկ մեկնաբանությունների քանակը միջինում չի գերազանցում 100-ը: Այս ցուցանիշները փաստում են բնակչության մասնակցության ցածր տեմպերի մասին: Այդուհանդերձ նշենք, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ստեղծվել է նաև էլեկտրոնային մեկ այլ հարթակ՝ «Ակտիվ քաղաքացի» անվամբ: Այս հարթակի ստեղծման նպատակը, քաղաքային իշխանությունների պնդմամբ, Երևանում մասնակցային կառավարման արմատավորումն է: Այսինքն, ի տարբերություն քաղաքապետարանի ֆեյսբուքյան էջի, որն առավելապես բնակիչների իրազեկվածությունն ապահովելու նպատակ ունի, «Ակտիվ քաղաքացի» հարթակը փորձում է անհրաժեշտ պայմաններ ապահովել քաղաքացիներին հուզող խնդիրների բարձրաձայնման, նոր գաղափարների, առաջարկությունների ներկայացման համար: Մասնակցության այս հարթակի առանձնահատկությունն այն է, որ ամբողջ գործընթացը բաց է, այսինքն՝ վեր հանված հիմնախնդիրներն ու առաջարկված լուծումները տեսանելի են հարթակ մուտք գործող յուրաքանչյուր բնակչի համար, որը միաժամանակ կարող է իրեն հուզող հիմնախնդրի լուծմանը կողմ քվեարկել՝ այդպիսով ՏԻՄ-երին բացահայտելով բնակչության մեծամասնության կամքը: Ներկայումս հարթակում առաջարկությունների քանակը 204 է, կարծիքների քանակը՝ 862, իսկ, ընդհանուր առմամբ, հարթակում գրանցված ակտիվ քաղաքացիների քանակը՝ 9017<sup>18</sup>: Բնականաբար, քանակական այս տվյալները կրկին փաստում են բնակչության մասնակցության ցածր տեմպերի մասին: Ինչպես գիտենք, բնակչության մասնակցության մեկ այլ հնարավորություն է ավագանու նիստերին ներկա գտնվելը: Յուրաքանչյուր հարթակում ուսումնասիրելով ավագանու նիստերի հեռարձակումները՝ կարող ենք փաստել, որ բնակչության մասնակցությունը նիստերին հազվադեպ բնույթ է կրում, իսկ նիստերի դիտումների քանակը միջինում տատանվում է 2000-3000-ի շրջանակում: Ինչպես պարզ դարձավ, առկա է տեղական գործերի կառավարմանը մասնակցության ցածր մակարդակ: Մասնակցության պատկերն առավել ամբողջական դարձնելու նպատակով մեր կողմից Երևանի 200 բնակչի շրջանում իրականացվել է հարցում, որի արդյունքում բացահայտվել են նաև այն հիմնական պատճառները, որոնք խոչընդոտում են տեղական գործերի կառավարմանը ակտիվ մասնակցությանը: Հարցման արդյունքներով կրկին արձանագրվել է մասնակցության ցածր մակարդակ. հարցվածների միայն 21%-ն է նշել, որ որևէ կերպ մասնակցել է քաղաքի կառավարմանը: Հարցման արդյունքում, բնակչության մասնակցության ցածր տեմպերի երկու հիմնական պատճառ է բացահայտվել: Հարցվածների մեծամասնությունը՝ 69%-ը, նշել է, որ չի վստահում քաղաքային իշխանություններին, այսինքն՝ չի հավատում, որ իր կարծիքն ու առաջարկությունը հաշվի կառնվեն ՏԻՄ-երի կողմից: Իսկ երկրորդ գերակշռող պատասխանը, որը կազմում է շուրջ 21%-ը, բնակիչների ոչ իրազեկ լինելն է. նրանցից շատերն անգամ տեղյակ չեն, որ մասնակցության նման հնարավորություններ ու հարթակներ գոյություն ունեն:

<sup>18</sup> <https://activecitizen.yerevan.am/>

**Եզրակացություններ:** Կատարված վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

- Երևան քաղաքի իշխանությունների կողմից «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրման ուղղությամբ իրականացվել են որոշ միջոցառումներ, սակայն հայեցակարգն ամբողջությամբ, իր բոլոր հնարավոր լուծումներով չի գործարկվել:
- Երևան քաղաքի եկամտային ցուցանիշների վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ ցածր է քաղաքի ֆինանսական ապակենտրոնացման մակարդակը, ինչն էական խոչընդոտ է հանդիսանում «Խելացի քաղաք» հայեցակարգի ամբողջական ներդրման համար: Հետևապես, թեպետ հայեցակարգի սկզբնական ներդրումը պիտի իրականացվի արտաքին միջոցների ներգրավմամբ, սակայն հետագայում, որպեսզի հնարավոր լինի ամբողջությամբ գործարկել «Խելացի քաղաք» հայեցակարգի խելացի լուծումները, քաղաքը պիտի ունենա սեփական եկամուտների բավարար թվով աղբյուրներ:
- Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ դարձավ, որ Երևանի բնակչության որոշակի հատվածին հասու չեն լինելու «Խելացի քաղաք» հայեցակարգի շրջանակներում մատուցվող ծառայությունները: Ուստի, Երևան քաղաքի իշխանությունները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի բնակչության բոլոր շերտերը պատրաստ լինեն հայեցակարգի ներդրման արդյունքում ի հայտ եկող փոփոխություններին:
- Վերլուծության արդյունքում բացահայտվեց, որ Երևան քաղաքի բնակչության չնչին մասն է մասնակցություն ցուցաբերում տեղական գործերի կառավարմանը: Մինչդեռ, մասնակցության նման ցածր տեմպերի պայմաններում «Խելացի քաղաք» հայեցակարգն իր բոլոր հնարավորություններով չի կարող գործարկվել: Ուստի, քանի որ հարցման արդյունքներով բացահայտվել են քաղաքի կառավարմանը բնակչության մասնակցության ցածր տեմպերի պատճառները, կարծում ենք, որ Երևանի իշխանությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ուղղված այդ պատճառների վերացմանը՝ դրանով իսկ նպաստելով խնդրի լուծմանը:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում ընդգծել, որ Երևան քաղաքում «Խելացի քաղաք» հայեցակարգի ներդրումը չի սահմանափակվում միայն վերոգրյալ հիմնախնդիրների շրջանակներով:

**Օգտագործված գրականություն**

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2008 թ. դեկտեմբերի 26:
2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 1997 թ. հունիսի 24:
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020 թ. ապրիլի 1-ի դրությամբ»:
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017»:

5. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018»:
6. ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019»:
7. Երևան քաղաքի ավագանու 2018 թ. մարտի 19-ի՝ «Երևան քաղաքի 2017 թ. բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» N 129-Ն որոշում:
8. 2018թ. տարեկան հաշվետվություն,  
<http://www.yerevan.am/am/archive-documents-of-2019/>:
9. Երևան քաղաքի 2019 թ. բյուջեի կատարման հաշվետվություն:
10. Երևանի զարգացման 2020 թ. ծրագիր,  
<https://www.yerevan.am/uploads/media/default/0001/93/32dca49b36c57e3b64f200a485f4de55046b901c.pdf>:
11. Logvinov V., Lebid N., Is the Smart Cities of Hybrid Model of Local Government - The Type III Cities: Four Possible Answers: Smart Cities and Regional Development Journal (03-2018),  
<http://academy.gov.ua/infopol/pages/dop/2/files/529643f8-89a1-4c9e-9361-309b93305227.pdf>»fbclid=IwAR2ZTAAbJZrDEcFXZW3G4u48hffV OeOEeD\_yqNSW1FLaaqC8bxm0CwK7g4Bk:
12. Mckinsey Global Institute, Smart Cities: Digital Solutions for a More Livable Future, McKinsey & Company, 2018,  
<https://www.mckinsey.com/~media/mckinsey/industries/capital%20projects%20and%20infrastructure/our%20insights/smart%20cities%20digital%20solutions%20for%20a%20more%20livable%20future/mgi-smart-cities-full-report.ashx>»fbclid=IwAR0UPAkFFW0tY5KlrXtupknd2ab0Xh1UjMBM LmgRLHQw9Tzn9FjZ59FsMkE.
13. Meijer A., Bolivar MPR, Governing the Smart City: a Review of the Literature on Smart Urban Governance: International Review of Administrative Sciences 2016, Vol.82(2),  
<https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/0020852314564308>»fbclid=IwAR0z8gOCZQ1pAFrbf5YBV\_oPXH\_1LB2XcVWP9D0hwrFG ZU4VM1v5uK7UW6k.
14. Smart Cities and Smart Spaces: Concepts, Methodologies, Tools, and Applications, Information Resources Management Association, IGI Global, 2019,  
[https://books.google.am/books?id=9v5oDwAAQBAJ&pg=PA271&lpg=PA271&dq=boyd+cohen+smart+city+wheel&source=bl&ots=3k8Tq4mqxq&sig=ACfU3U0cvArFAEI738ZS86gggbMKa3-VIAG&hl=hy&sa=X&ved=2ahUKewj8wNq4\\_aTpAhWITsAKHeHcAWo4MhDoATAAegQIChAB#v=onepage&q=boyd%20cohen%20smart%20city%20wheel&f=false](https://books.google.am/books?id=9v5oDwAAQBAJ&pg=PA271&lpg=PA271&dq=boyd+cohen+smart+city+wheel&source=bl&ots=3k8Tq4mqxq&sig=ACfU3U0cvArFAEI738ZS86gggbMKa3-VIAG&hl=hy&sa=X&ved=2ahUKewj8wNq4_aTpAhWITsAKHeHcAWo4MhDoATAAegQIChAB#v=onepage&q=boyd%20cohen%20smart%20city%20wheel&f=false).
15. Top 50 Smart City Governments, Eden Strategy Institute and ONG&ONG Pte Ltd. 2018,  
[https://static1.squarespace.com/static/5b3c517fec4eb767a04e73ff/t/5b513c57aa4a99f62d168e60/1532050650562/Eden-OXD\\_Top+50+Smart+City+Governments.pdf](https://static1.squarespace.com/static/5b3c517fec4eb767a04e73ff/t/5b513c57aa4a99f62d168e60/1532050650562/Eden-OXD_Top+50+Smart+City+Governments.pdf)»fbclid=IwAR0Z0F8sQ MbM0egco\_BFdPCjfrV\_UDnJinYbczFpH5KcZBNzDwBagU42e0E.

16. World Urbanization Prospects 2018 Highlights, United Nations, New York, 2019,  
<https://population.un.org/wup/Publications/Files/WUP2018-Highlights.pdf>.
17. <https://www.fastcompany.com/3047795/the-3-generations-of-smart-cities>.
18. <https://www.yerevan.am/am/>
19. <https://activecitizen.yerevan.am/>
20. <http://www.findglocal.com/AM/Yerevan/127908713958649/TMCYC>

## ВИЛЕН ХАЧАТРЯН

*Заведующий кафедрой управления*

*Академии государственного управления Республики Армения,*

*кандидат экономических наук, доцент*

## АРАКСЯ БАРСЕГЯН

*Аспирант кафедры управления АГЭУ*

***Проблемы внедрения концепции «Умного города» в Ереване.*** – В настоящее время существует ряд проблем в различных секторах экономики города Еревана, основной причиной которых является большая численность населения города. Решение этих проблем можно найти, внедрив концепцию «Умного города». Однако внедрение концепции – процесс сложный, подразумевающий выполнение масштабных работ. В этом контексте в данной статье делается попытка определить факторы, препятствующие превращению Еревана в умный город. Для этого сначала была изучена методология внедрения концепции умного города, шаги, принятые властями Еревана для внедрения концепции умного города, затем были проанализированы показатели доходов соответствующих лет города Еревана, предоставляемые в городе электронные услуги, а также количественные показатели бедности, пожилого населения и непосредственного участия населения в управлении городом. В результате мы выделили ряд проблем по внедрению концепции «Умный город» и возможные пути их решения.

**Ключевые слова:** *концепция «Умного города», Ереван, вопросы реализации концепции, показатели доходов, электронные услуги, участие населения.*

JEL: R1, R11, R5, O18, P25

**VILEN KHACHATRYAN**

*Head of the Chair of Administration at the Public  
Administration Academy of the Republic of Armenia,  
PhD in Economics, Associate Professor*

**ARAKSYA BARSEGHYAN**

*PhD Student at the Chair of Management at ASUE*

***Issues of Introducing the Concept of "Smart City" in Yerevan.***– Currently, there is a number of issues in various sectors of the economy of the city of Yerevan, the primary reason for which is the large population of the city. The solution to these problems can be found by introducing the "Smart City" concept. However, the introduction of the concept is a complicated process, it implies the implementation of large-scale work. In this context, this paper attempts to highlight the factors that hinder making Yerevan a smart city. For this purpose, the methodology of introducing the concept of smart city was first studied, also the steps to introduce the concept of smart city taken by the local self-government bodies of Yerevan were examined, then the income indicators of the respective years of the city of Yerevan, e-services provided in the city, as well as the quantitative indicators of poverty, elderly population and direct participation of the population in city management were analyzed. As a result, we have singled out a number of issues in terms of the introduction of the "Smart City" concept and some possible solutions.

**Key words:** *"Smart City" concept, Yerevan, the concept implementation issues, revenue indicators, e-services, population participation.*

JEL: R1, R11, R5, O18, P25